ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 թվականին ՀՀ Շիրակի մարզի համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման վերաբյալ

ՀՀ կառավարության 2006 թվականի 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել թվով 68 տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով ծրագրային հայտեր, որից 60 ծրագրեր գնահատման միջգերատեսվչան հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել, 7 ծրագրային հայտ համայքների ֆոնդային բյուջեներում համապատասխան ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով իրականացնելու են 2021 թվականին և 1 սուբվենցիոն հայտ մերժվել է:

Ծրագրերի ընդհանուր արժեքը (ներառյալ նախագծի, տեխ. հսկաղության, հեղ. հսկողության և փորձաքննության արժեքները) կազմում է **3,360,199,526** դրամ, որից ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում **1,943,714,561** դրամ (57,8%), համայնքի բյուջեի ֆոնդային մասից **1,288,190,802** դրամ (38,3%) և այլ ներդրողներ **128,294,163** դրամ (3,9%):

Ավարտված և ՀՀ կառավարության որոշումներով հաստատված են՝ **49 ծրագիր** (27.08.2020թ N1425-Ն՝ 3 ծրագիր, 06.11.2020թ N1787-Ն՝ 3 ծրագիր, 03. 12.2020թ N1956-Ն՝ 3 ծրագիր, 03. 12.2020թ N1981-Ն՝ 2 ծրագիր, 17. 12.2020թ N2110-Ն՝ 2 ծրագիր, 17. 12.2020թ N2112-Ն՝ 9 ծրագիր, 24.12.2020թ N2183-Ն՝ 27 ծրագիր): **6 ծրագրի** աշխատանքների կատարումը տեղափոխվել է 2021 թվական (1.Աշոցք համայնքի Համայնքի կարիքների համար աղբատար ավտոմեքենայի ձեռքբերում, 2.Բենիամին համայնքի 1-ին փողոցի 2295,2քմ ճանապարհների ասֆալտապատում, 3.Արփի համայնքի Ծաղկուտ բնակավայրի համայնքային կենտրոնի նորոգում, 4.Անի համայնքի սահմանամերձ Լուսաղբյուր բնակավայրի խմելու ջրի մատակարարման ներքին ցանցի կառուցում, 5.Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի շենքի վերակառուցում, 6.Գյումրի համայնքի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր: **5 ծրագրի** մրցույթ չի հայտարարվել (4 համալիր փորձաքննություն և 1 սեսմակայունության արդյունքներով դիտողությունները լրամշակում են. 1.Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում, 2.Մարմաշեն համայնքի Շիրակ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում, 3.Մարմաշեն համայնքի Ջաջուռավան բնակավայրի մանկապապարտեզի շենքի վերակառուցում, 4.Ախուրյան համայնքի Ջրառատ բնակավայրի մանկապարտեզի վերակառուցում և լրամշակում են 5. Բայանդուր համայնքի Արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում:

Ըստ արդյունքային ցուցանիշների իրականացվել է.

- Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում՝ 15 ծրագիր (կառուցում՝ 104000 քմ, 15,7 կմ)
- Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում՝ 2 ծրագիր (շահառու՝ 1188, կառուցում՝ 8,83 կմ)
- Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում՝ 2 ծրագիր (տնտեսության թիվ՝ 530, ոռոգվող տարածք՝ 75հա, կառուցում՝ 3,7 կմ)
- Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում՝ 5 ծրագիր (լուսատուներ 820 հատ, կառուցում՝ 42 կմ)
- Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 8 ծրագիր (ֆոտովոլտային կայ. հզոր. 163կՎտ)
- Բնակավայրերի գազաֆիկացում՝ 1 ծրագիր (կառուցում՝ 8 կմ)
- Մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում՝ 10 ծրագիր (երեխաների թիվ՝ 580)
- Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում՝ 8 ծրագիր (կառուցում՝ 2519քմ)

- Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում՝ 1 ծրագիր (շահառու՝ 78, կառուցում՝ 805քմ)
- Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում՝ 1 ծրագիր (գույքի ձեռքբերում՝ 1021 հատ)
- Մեքենասարքավորումների ձեռքբերում՝ 7 ծրագիր (միավոր տեխնիկա և գործիք՝ 25հատ, հակակարկտային կայան՝ 24հատ):